

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՅԼՈՒՆ ԵՆ»

### ՎԱՐՉԱԴԵՏ ՄԱՍՈՒԿԱ ԲԱԽՏԱԾԵՆԻ ԴԱՏՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ԵՐԵՎԱՆ

Սեպտեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն պաշտոնական այցով գտնվում էր Երեւանում: «Ձվարթնոց» օդանավակայանում Վրաստանի վարչապետին եւ պաշտոնական պատվիրակության անդամներին դիմավորեցին Հայաստանի արտաքին գործերի նախարար Զորիար Մնացականյանը, պաշտոնական այլ անձինք: Վրաստանի վարչապետին դիմավորողների թվում էին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սաղոյանը: Վրաստանի վարչապետի եւ պաշտոնական պատվիրակության անդամների դիմավորման պաշտոնական արարողությունն անցկացվեց Հայաստանի կառավարության նստավայրում: Պատվավոր պահակախմբի մասնակցությամբ, հյուրերին դիմավորեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, կառավարության անդամներ:

### «ԶՄՈՒՄԱՆՔ ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏՈՒԿ ԲՆՈՒՅԹԸ»



Եւ հայ ժողովրդի գործողություններում ու մտադրություններում չկան որեւէ դավադրություն, նեգատիվ մտադրություն, որեւէ սպառնալիք, եւ հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունը պետք է վստահ լինեն, որ Վրաստանի ու վրաց ժողովրդի գործողություններում եւ մտադրություններում չկան որեւէ դավադրություն, որեւէ սպառնալիք ու վատ մտադրություն Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի նկատմամբ: Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն իր պատասխան խոսքում ասաց.

Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, կայացավ երկու երկրների վարչապետերի առանձնազրույցը, որի ժամանակ քննարկվեցին երկկողմ բարեկամական հարաբերությունների ընթացքը եւ հետագա զարգացման հեռանկարները: Ողջունելով Վրաստանի վարչապետին՝ Հայաստանի վարչապետը նշեց.

- Վրաստանը, վրաց ժողովուրդը պետք է հանդգնած լինեն, որ Հայաստանի Հանրապետության

- Կարծում եմ՝ այն հարաբերությունները, որոնք դարերի ընթացքում ձեւավորվել են մեր երկու պետությունների միջեւ, իսկապես կարելու է: Չէ՞ որ մենք նոր էջից չենք սկսում մեր պատմությունը. դա բազմադարյա պատմություն է, որը զարգացնելու ենք: Մենք առավելագույն շահագրգռված ենք, որ զարգացնենք մեր քաղաքական, տնտեսական հարաբերությունները, ինչպես նաեւ մշակույթի եւ կրթության ոլորտներում մեր կապերը:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ



Սեպտեմբերի 10-ին պաշտոնական այցով Երեւանում գտնվող Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հետ: Երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ կայացած հանդիպմանը, Արմեն Սարգսյանը ողջունեց վարչապետ Բախտաձեի եւ նրա գլխավորած պատվիրակության այցը Հայաստան՝ ընդգծելով, որ Հայաստանի ու Վրաստանի բարեկամությունը պատմական խորն արմատներ ունի:

- Երկու երկրներն այսօր թեւակոխում են նորագույն պատմության մի շրջան, որն առանց վարանելու կարելի է բնութագրել որպես եղբայրական եւ գործընկերային: Ներկայումս մեր քաղաքական հարաբերությունները

գտնվում են բարձր մակարդակի վրա, սակայն առկա է չիրացված մեծ ներուժ, հատկապես՝ տնտեսության ոլորտում,- նշեց Արմեն Սարգսյանը:

Իր հերթին, Վրաստանի վարչապետը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ առանձնահատուկ պատիվ է վարչապետի կարգավիճակով հյուրընկալվել Հայաստանում:

- Մեր քաղաքական հարաբերությունները, ինչպես նշեցիք, բարձր մակարդակի վրա են գտնվում, սակայն տնտեսական բնագավառում իսկապես ունենք չօգտագործված ներուժ: Այսօր իմ գործընկերների հետ մանրամասն խոսել ենք համագործակցության ուղղությունների մասին,- նշեց վարչապետ Մամուկա Բախտաձեն:

### ՆՈՐ ԱՉԴԱԿ՝ ՎՐԱՅ-ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Պաշտոնական այցով Երեւանում գտնվող Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի հետ: Հանդիպմանը վրացական կողմից ներկա էին Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին, Վրաստանի խորհրդարանի փոխնախագահ Գիորգի Վոլսկին, պատգամավորներ «Վրաստան» (Շարունակությունը՝ 2-րդ էջում)



### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### ԱՎԱՐՏՎԵՑ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ



#### ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆ Ե ՀԱՅՏԵՆ 46 ԹԵԿՆԱԾՈՒ

Սեպտեմբերի 8-ին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ավարտվեց նախագահության թեկնածության ցանկացողների հայտերի ընդունումը: Ինչպես հայտնեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան, ներկայացվել է 46 դիմում, որից 26-ը՝ նախաձեռնողական խմբերի, իսկ 20-ը՝ կուսակցությունների կողմից:

ԿԸՀ-ի պարզաբանմամբ, սեպտեմբերի 8-ից,

10 օրվա ընթացքում թեկնածու գրանցվելու ցանկացողներն ընտրական վարչակազմ պետք է ներկայացնեն աջակիցների ստորագրությունները: Ստորագրությունների ներկայացման վերջնաժամկետը սեպտեմբերի 18-ն է, իսկ գրանցումը ավարտվելու է սեպտեմբերի 28-ին:

Այս պահի դրությամբ, գրանցվել է նախագահության 6 թեկնածու, դրանք են՝ Միխեիլ Գելա Սալուաշվիլին («Արդարության վերականգնման միություն ազգի ձայն. Աստված է մեր արդարությունը»), Զվիադ Բաղդավաձե («Քաղաքացիական»)

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Սեպտեմբերի 10-ին Թբիլիսիում կայացել են Վրաստանի եւ Հայաստանի ԱԳ նախարարությունների միջեւ արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովման վերաբերյալ խորհրդատվություններ:

Խորհրդատվությունների շրջանակներում, Հայաստանի ԱԳ մամուլի խոսնակ Տիգրան Բալայանը հանդիպումներ ունեցավ Վրաստանի ԱԳ նախարարության սահմանակից երկրների վարչության պետ Մալխազ Միքելաձեի, ԱԳ մամուլի խոսնակ Վլադիմեր Կոնստանտինիդի, Մամուլի եւ տեղեկատվության վարչության պետ Մարի Նարչեմաշվիլու, Միջազգային մշակութային եւ հումանիտար հարաբերությունների վարչության պետ Քեթևան Կանդելակիի հետ:

Հանդիպումներին քննարկվել են տեղեկատվական եւ հասարակայնության հետ կապերի ոլորտներում իրականացվող աշխատանքներին առնչվող հարցեր: Զրուցակիցները բարձր են գնահատել տեղեկատվական աշխատանքի վերաբերյալ առաջին միջգերատեսչական խորհրդակցությունների անցկացումը՝ ընդգծելով, որ այն խորհրդանշուն է Հայաստանի ու Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների փոխգործակցության ուղղությամբ:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)





